# ԱԶԳԱՅԻՆ

## ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ Ի ԲԻՒՐԱԿԱՆ.

13-ն ամսոյս Երկուշաբթի օր ի Բիւրական գնաց Վեհ. Հայրապետ։

## ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ.

Ի 4-ն ամսոյս Ատրպատականի Վիճակին Հայոց նորընտիր Առաջնորդ Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոս մեկնեցաւ աստի ի Ս. Էջմիածնէ, և զկնի ինն աւուրց հասնելով ի Դաւրէժ արտաքոյ կարգի ընդունելութիւն գտած է։

## ԱԽԼՔԱԼԱԿԱՑ ՇՐՋԱԿԱՑ ԳԻՒՂՕՐԱՅՔ.

Ախլքալակայ նահանգում ընդամենը կան 99 գիւղեր, որք կազմում են 4679 տուն կամ ծուխ. այս գիւղերից 51ը բոլորովին Հայերի գիւղեր են, 10ը՝ Հայ-կաթոլիկների, 8ը Վրացիների, 8ը Դուխապօռների, 12 Տաճիկների, 2 Յոյների և 8ը գիւղեր ևս խառն են վերոյ գրեալ ազգութիւններով։ Սորանք բոլորը միասին են, 42653 հոգիք. —22329 արական սեռի և 20324 իգական սեռի։

Այս բնակիչները պարապում են առհասարակ երկրագործութեամբ և անասնապահութեամբ. երկրագործութիւնը նահապետական հին դրութեան մէջ է։ Այր մարդիկ տարւոյ երեք եղանակներում աշխատում են չարաչար և անկանոն կերպով. իսկ ձմեռը, որը չորս ամսից աւելի է տեւում, հաւաքուած և նստած տաք գոմերում պարապ և անգործ, տղայական առասպել պատմութիւններով, իւրեանց ձիերն և գոմէշներ գովելով են պարապում ու զուարճանում *)։ Շատ քչերը սորանցից իւրեանց երկրի բոյսը տանում են վաճառելու Աղպուլաղ, Մանգլիս, Ախլցխայ և Թիֆլիզ և այն տեղերից իւրեանց տան հարկաւորեալները գնելով վերադառնում. իսկ մեծ մասը տանից դուրս անգամ չեն գնում, իւրեանց աշխատութեան արդիւնքը գիւղի մէջ տեղնիտեղը փօթրատչիկներին, նոցա գործակատարներին և չարչիներին են վաճառում։

Մեր այս գիւղացիները աւանդապահ, և ջերմեռանդ են դէպի իւրեանց կրօնը և եկեղեցին և նոցա սպասաւորները։ Նիւթական դրութեամբ չեն այնքան չքաւոր. նոցա մէջ կան բաւականին հարուստ քէհաներ, առհասարակ դոցա ամենքի դրութիւնը ապահովուած կը լինէր՝ եթէ սորին դասի վերայ ծանրացած չը լինէր ագահ վաշխառուների և կեղեքիչ վաճառականների հարստահարութիւնքը, և մանաւանդ եթէ բաւականանային իւրեանց առտնին սովորական կեցութեամբ առանց հետեւելու անսովոր կործանիչ և շռայլ ծախսերու։ Սոքա չափից դուրս գործածում են արաղը, կարող եմ ասել մեծ և փոքր վարակուած են արբեցութեան չար ախտովը և ամենեքին անբարոյականութիւն և մեղք չեն համարում այդ հոգեւորականներից սկսած մինչև վերջին ռամիկը։

Մտաւորական կողմից թաղուած են դեռ ևս տգիտութեան թանձր մառախուղի մէջ և անտես արած իւրեանց բնածին ընդունակութիւնքը՝ չը նայելով թէ իւրեանց գաղթականութիւնից անց էր կացել արդէն քառասուն տարիներ, դեռ մինչև ցայսօր չեն սթափած՝ մտաւոր թմրութիւնից։ Դեռ ևս ոչ մի գիւղում կանոնաւոր ծխական դպրոցներ չեն բացուած հակառակ մեր ազգասէր Վեհափառ Հօր բաղձանքների և այնքան թախանձանքներին։ Շատ նախանձելի կը լինէր եթէ մեր գիւղերի տանուտէրները, հարուստ և առաջաւոր քէհաներն, բարեկրօն ծխական քահանաները, որք ժողովրդեան մէջ մեծ համարում ունին և շատ գործեր են առաջ տանում, մանաւանդ Հայ գործակատարը ամենայն սիրով և ջերմեռանդութեամբ գլուխ քաշեն և աշխատեն առաջ տանել հասարակաց բարօրութեան համար աշխատող Վեհափառ Հօր սուրբ կամքը իւրեանց զաւակների կրթութեան համար։

(*) Մեր խօսքերը բոլորովին վերաբերում են մեր Հայ գիւղացիներին։